Հեռացողների և մնացողների պատմությունը

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Bookmark

ELENA FERRANTE

Storia di chi fugge e di chi resta

L'amica geniale

VOLUME 3

Bookmark

ԷԼԵՆԱ ՖԵՐԱՆՏԵ

Հեռացողների և մնացողների պատմությունը

Իմ հանճարեղ ընկերուհին

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ՎԵՊ

Թարգմանությունն իտալերենից՝
Ջենանի Ֆիլյանի

new mag

ԵՐԵՎԱՆ
2023

Bookmark

ՀՏԴ 821.131.1-31 Ֆերանտե
ԳՄԴ 84(4Իտ)-44
Ֆ 470

Ֆ 470 Ֆերանտե Էլենա
Հեռացողների և մնացողների պատմությունը: Իմ հանճարեղ ընկերուհին:
Վեպ / Է. Ֆերանտե.- Եր.: Newmag, 2023.
Գիրք երրորդ.- 396 էջ:

Էլենա Ֆերանտեի «Իմ հանճարեղ ընկերուհին» ընթերցողներին ներկայացրեց անմոռանալի Էլենային և Լիլային, որոնց սրտառուչ ընկերությունը հեղինակի նեապոլիտանական վեպերի առանցքում է: «Հեռացողների և մնացողների պատմությունը» այս շարքի երրորդ գիրքն է:

Գրքում երկու ընկերուհիների կյանքն է հասուն տարիքում: Նրանց արդեն միավորում են տարիների ընկերությունն ու անցյալը: Այս հատորը մասնագիտական աճի, փողոցային ակցիաների ու հեղափոխական իրադարձությունների մասին է: Էլենան ավարտում է էլիտար քոլեջ, ամուսնանում, երեխաներ ունենում: Հետո բաժանվում է հանուն առաջին սիրո, գիրք է գրում: Լիլան աշխատում է երշիկի գործարանում. ճանձրալի, տանջալից աշխատանքին զուգահեռ ստիպված է հանդուրժել վատ վերաբերմունք, ծեծ ու նույնիսկ սեռական բռնություն: Այնուամենայնիվ, կարողանում է դուրս գալ այս վիճակից: Նա և Էնցոն, որի հետ ապրում է առանց ինտիմ ու զգացմունքային հարաբերությունների, հիմնում են համակարգչային ընկերություն:

ՀՏԴ 821.131.1-31 Ֆերանտե
ԳՄԴ 84(4Իտ)-44

ISBN 978-9939-884-88-2
Էլենա Ֆերանտե «Հեռացողների և մնացողների պատմությունը» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ
Elena Ferrante Storia del nuovo cognome © 2012 by Edizioni E/O

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Գրքի թարգմանությունն իրականացվել է Edizioni e/o (Հռոմ, Իտալիա) գրական գործակալության հետ կնքված պայմանագրով:

Բովանդակություն

Գործող անձինք և համառոտ տեղեկություններ առաջին հատորի իրադարձությունների վերաբերյալ 7

Միջին տարիք 15

Bookmark

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

և համառոտ տեղեկություններ նախորդ հատորի իրադարձությունների վերաբերյալ

Չերուլո ընտանիք (կոշկակարի ընտանիքը)

Ֆերնանդո Չերուլո, կոշկակար, Լիլայի հայրը: Տարրական դպրոցից հետո աղջկան թույլ չի տալիս ուսումը շարունակել:

Նունցիա Չերուլո, Լիլայի մայրը: Կողմնակից է աղջկան, բայց բավարար հեղինակություն չունի նրան աջակցելու համար:

Ռաֆայելա Չերուլո, որին անվանում են նաև Լինա կամ Լիլա: Ծնվել է 1944 թվականի օգոստոսին: 66 տարեկանում անհետանում է Նեապոլից: Փայլուն աշակերտուհի է, 10 տարեկանում գրում է *Երկնագույն փերին* պատմվածքը: Տարրական դպրոցն ավարտելուց հետո թողնում է ուսումը և սովորում կոշկակարի մասնագիտությունը: Շատ վաղ ամուսնանում է Ստեֆանո Կարաչիի հետ: Հաջողությամբ ղեկավարում է երշիկեղենի խանութը նոր թաղամասում, ապա կոշիկի խանութը Նահատակների հրապարակում: Իսկիայում արձակուրդի ժամանակ սիրահարվում է Նինո Սարատորեին, հանուն որի թողնում է ամուսնուն: Նինոյի հետ կյանքի փլուզումից և որդու՝ Ջենարոյի ծնվելուց հետո Լիլան վերջնականապես լքում է Ստեֆանոյին, երբ պարզվում է, որ Ադա Կապուչոն նրանից երեխայի է սպասում: Էնցո Սկանոյի հետ տեղափոխվում է Սան Ջովաննի ա Տեդուչո բնակավայրը և սկսում աշխատել Բրունո Սոկավոյի երշիկի գործարանում:

Ռինո Չերուլո, Լիլայի ավագ եղբայրը, նույնպես կոշկակար: Հոր՝ Ֆերնանդոյի հետ, Լիլայի և Ստեֆանո Կարաչիի ֆինանսական աջակցության շնորհիվ գործարկում է *Չերուլո* ապրանքանիշի կոշիկների արտադրությունը: Ամուսնանում է Ստեֆանոյի քրոջ՝ Պինուչա Կարաչիի հետ: Ունի մեկ որդի՝ Ֆերդինանդոն, որին կոչում են Դինո: Նրա անունն է կրում նաև Լիլայի առաջնեկը:

Այլ երեխաներ

Գրեկո ընտանիք (դռնապանի ընտանիքը)
Էլենա Գրեկո, որին կոչում են նաև Լենուչա կամ Լենու: Ծնվել է 1944 թվականի օգոստոսին, այս երկար պատմության հեղինակն է: Էլենան սկսում է գրել այն պահից, երբ տեղեկանում է, որ իր մանկության ընկերուհին՝ Լինա Զերուլոն, որին միայն ինքն է Լիլա անվանում, անհետացել է: Տարրական դպրոցից հետո Էլենան հաջողությամբ շարունակում է իր ուսումը: Լիցեյում դրսևորած հմտության և պրոֆեսոր Գալիանիի պաշտպանության շնորհիվ կարողանում է Սուրբ Հոգու դերի մասին բանավեճից հետո չարժանանալ կրոնի դասախոսի պատժին: Այդ մենամարտի մասին հոդված է գրում Լիլայի անմիջական օգնությամբ և Նինո Սարատորեի առաջարկով, որին գաղտնի սիրահարված էր վաղ մանկուց: Նինոն խոստանում է հոդվածը տպագրել այն ամսագրում, որի հետ գործակցում է, սակայն խմբագրությունը մերժում է: Էլենայի ուսման փայլուն ավարտը նշանավորվում է Պիզայի օրինակելի բարձրագույն դպրոցի ավարտական դիպլոմով: Այս դպրոցում նա հանդիպում է Պիետրո Այրոտային և նշանվում նրա հետ: Հրատարակվում է նրա վեպը, որում նկարագրում է թաղամասի կյանքը և իր սեռական փորձություններն Իսկիայում:
Պեպե, Ջանի և Էլիզա, Էլենայի կրտսեր եղբայրներն ու քույրը
Հայրը, քաղաքապետարանի դռնապանը
Մայրը, տնային տնտեսուհի: Կաղում է, ինչից մշտապես նեղսրտում է Էլենան:

Կարաչի ընտանիք (դոն Աքիլեի ընտանիքը)
Դոն Աքիլե Կարաչի, հեքիաթների մարդակեր, սև շուկայի առևտրական, վաշխառու: Սպանվել է չպարզված հանգամանքներում:
Մարիա Կարաչի, դոն Աքիլեի կինը, Ստեֆանոյի, Պինուչայի և Ալֆոնսոյի մայրը: Աշխատում է երշիկեղենի ընտանեկան խանութում:
Ստեֆանո Կարաչի, հանգուցյալ դոն Աքիլեի որդին, Լիլայի ամուսինը: Տնօրինում է հոր ունեցվածքը և ժամանակի ընթացքում դառնում հաջողակ առևտրական՝ շնորհիվ երշիկեղենի երկու խանութների: Նահատակների հրապարակում կոշիկի խանութ է բացում Սոլարա եղբայրների հետ: Լիլայի անհնազանդ բնավորության պատճառով սիրային կապի մեջ է մտնում Ադա Կապուչոյի հետ, և երբ նա հղիանում է, սկսում են համատեղ ապրել: Լիլան տեղափոխվում է Սան Ջովաննի ա Տեդուչո:

Պինուչա, դոն Աքիլեի դուստրը: Սկզբում աշխատում է երշիկեղենի ընտանեկան բիզնեսում, հետո՝ կոշիկի խանութում: Ամուսնանում է Լիլայի եղբոր՝ Ռինոյի հետ, որից ունենում է որդի՝ Ֆերդինանդոն, նույն ինքը՝ Դինոն:
Ալֆոնսո, դոն Աքիլեի որդին: Էլենայի դասընկերն է, նստում է նրա կողքին: Նշանված է Մարիզա Սարատորեի հետ: Հետագայում դառնում է Նահատակների հրապարակի կոշիկի խանութի կառավարիչը:

Պելուզո ընտանիք (ատաղձագործի ընտանիքը)
Ալֆրեդո Պելուզո, ատաղձագործ: Կոմունիստ: Մեղադրվել է դոն Աքիլեին սպանելու մեջ, դատապարտվել և ուղարկվել բանտ, որտեղ էլ մահացել է:
Ջուզեպինա Պելուզո, Ալֆրեդոյի կինը: Ծխախոտի գործարանի բանվոր է, կյանքը նվիրել է զավակներին և բանտում գտնվող ամուսնուն, որի մահից հետո ինքնասպան է եղել:
Պասկուալե Պելուզո, Ալֆրեդոյի և Ջուզեպինայի ավագ որդին, որմնադիր, կոմունիստական կուսակցության գործուն անդամ: Առաջինն է նկատել Լիլայի գեղեցկությունը և սիրո խոստովանություն է արել: Ատում է Սոլարաներին: Նշանված է եղել Ադա Կապուչոյի հետ:
Կարմելա Պելուզո, նույն ինքը՝ *Կարմեն*: Պասկուալեի քույրն է, արդուզարդի խանութի վաճառող, որին Լիլան աշխատանքի է ընդունում Ստեֆանոյի երշիկեղենի նոր խանութում: Վաղուց նշանված է եղել Էնցո Սկանոյի հետ, որը զինվորական ծառայությունից հետո առանց որևէ բացատրության թողել է նրան: Հետագայում Կարմենը նշանվում է խաուղու բենզալցակայանի աշխատողի հետ:
Այլ երեխաներ

Կապուչո ընտանիք (խենթ այրու ընտանիքը)
Մելինա, Նունցիա Զերուլոյի ազգականուհին է, այրի: Լվանում է հին թաղամասի շենքերի աստիճանները: Եղել է Նինոյի հոր՝ Դոնատո Սարատորեի սիրուհին, ինչի պատճառով Սարատորենները հեռացել են թաղամասից, և Մելինան գրեթե կորցրել է բանականությունը:
Մելինայի *ամուսինը,* պտուղբանջարեղենի շուկայում արկղեր էր բեռնաթափում, մահացել է չպարզված հանգամանքներում:
Ադա Կապուչո, Մելինայի դուստրը: Մանկուց մորն օգնում է աստիճանները լվանալ: Լիլայի շնորհիվ աշխատանքի է ընդունվում հին թաղամասի

երշիկեղենի խանութում: Երկար ժամանակ նշանված լինելով Պասկուալե Պելուզոյի հետ՝ դառնում է Ստեֆանո Կարաչիի սիրուհին և հղիանալով գնում է նրա հետ ապրելու: Նրանց կապից ծնվում է դուստրը՝ Մարիան:
Անտոնիո Կապուչո, նրա եղբայրը, մեքենագործ: Նշանված է Էլենայի հետ և խանդում է Նինո Սարատորեին: Զինվորական ծառայության մեկնելու հեռանկարը լրջորեն մտահոգում է նրան, բայց երբ Էլենան Սոլարա եղբայրներին է դիմում նրա մեկնումը կանխելու համար, դա համարում է իր համար խորապես նվաստացուցիչ և վերջ է դնում իրենց պատմությանը: Զինվորական ծառայության ընթացքում ծանր նյարդային խանգարում է ստանում և վաղաժամկետ ազատվում է ծառայությունից: Վերադառնալով թաղամաս՝ ծայրահեղ աղքատության պատճառով աշխատանքի է անցնում Միքելե Սոլարայի մոտ, որը նրան կարճ ժամանակ անց ուղարկում է Գերմանիա՝ խորհրդավոր հանձնարարությամբ:
Այլ երեխաներ

Սարատորե ընտանիք (բանաստեղծ-երկաթուղայինի ընտանիքը)
Դոնատո Սարատորե, երկաթուղային հսկիչ, բանաստեղծ, լրագրող: Հայտնի կնամոլ է, եղել է Մելինա Կապուչոյի սիրեկանը: Երբ Էլենան արձակուրդ է մեկնում Իսկիա և հյուրընկալվում է նույն տանը, որում իջևան էին գտել Սարատորեները, ստիպված է լինում շտապ թողնել կղզին՝ Դոնատոյի սեռական ոտնձգություններից խուսափելու համար: Սակայն հաջորդ ամռանն Էլենան ինքն է լողափին տրվում նրան՝ Նինոյի և Լիլայի հարաբերությունների ցավը մեղմելու համար: Այդ նվաստացուցիչ դեպքի մասին հետագայում Էլենան գրում է իր առաջին գրքում, որն ավելի ուշ հրատարակվում է:
Լիդիա Սարատորե, Դոնատոյի կինը
Նինո Սարատորե, Դոնատոյի և Լիդիայի հինգ զավակներից ամենամեծը: Ատում է հորը: Փայլուն ուսանող է: Նա երկարատև, գաղտնի հարաբերությունների մեջ է Լիլայի հետ, ինչը հանգեցնում է շատ կարճ համատեղ կյանքի, և Լիլան հղիանում է:
Մարիզա Սարատորե, Նինոյի քույրը: Նշանված է Ալֆոնսո Կարաչիի հետ:
Պինո, Կլելիա և Չիրո Սարատորեներ, Դոնատոյի և Լիդիայի կրտսեր զավակները:

Սկանո ընտանիք (մրգավաճառի ընտանիքը)
Նիկոլա Սկանո, մրգավաճառ: Մահացել է թոքաբորբից:
Ասունտա Սկանո, Նիկոլայի կինը: Մահացել է քաղցկեղից:
Էնցո Սկանո, Նիկոլայի և Ասունտայի որդին, նույնպես մրգավաճառ է: Լիլան մանկուց համակրում է նրան: Էնցոն երկար ժամանակ նշանված է եղել Կարմեն Պելուզոյի հետ, որին լքում է առանց բացատրությունների՝ զինվորական ծառայությունից վերադառնալուց հետո: Բանակում վերսկըսում է ուսումը որպես դրսեկ ուսանող և ավարտում՝ ստանալով ինժեների դիպլոմ: Երբ Լիլան որոշում է ընդմիշտ լքել Ստեֆանոյին, Էնցոն հոգ է տանում նրա և որդու՝ Ջենարոյի մասին: Միասին տեղափոխվում են Սան Ջովաննի ա Տեդուչո բնակավայր:
Այլ երեխաներ

Սոլարա ընտանիք (նույնանուն բար-հրուշակարանի սեփականատիրոջ ընտանիքը)
Սիլվիո Սոլարա, բար-հրուշակարանի սեփականատերը, միապետական ֆաշիստ, մաֆիայի անդամ, թաղամասի անօրինական առևտրի պարագլուխ: Խոչընդոտել է *Չերուլո* կոշիկի գործարանի բացմանը:
Մանուելա Սոլարա, Սիլվիոյի կինը, վաշխառու: Թաղամասում շատերն են վախենում նրա «կարմիր գրքից»:
Մարչելո և Միքելե Սոլարաներ, Սիլվիոյի և Մանուելայի որդիները: Պարծենկոտ են և ամբարտավան, թեև նրանց սիրում են թաղամասի բոլոր աղջիկները՝ բացի Լիլայից: Մարչելոն սիրահարվում է Լիլային, բայց մերժվում է: *Միքելեն*, որն ավելի երիտասարդ է Մարչելոյից, շատ ավելի սառնասիրտ է, խելացի և դաժան: Նշանված է Ջիլյոլայի՝ հրուշակագործի դստեր հետ, բայց տարիների ընթացքում տարվում է Լիլայի հանդեպ հիվանդագին մոլուցքով:

Այրոտա ընտանիք (հրուշակագործի ընտանիքը)
Սինյոր Այրոտա, հրուշակագործ *Սոլարա* բար-հրուշակարանում
Ռոզա Այրոտա, հրուշակագործի կինը
Ջիլյոլա Այրոտա, հրուշակագործի դուստրը, Միքելե Սոլարայի նշանածը
Այլ երեխաներ

Այրոտա ընտանիք

Գուիդո Այրոտա, պրոֆեսոր, դասավանդում է հունական գրականություն:
Ադելե, նրա կինը: Համագործակցում է Միլանի հրատարակչատան հետ, որը հրատարակում է Էլենայի վեպը:
Մարիառոզա Այրոտա, նրանց ավագ դուստրը, Միլանում արվեստի պատմություն է դասավանդում:
Պիետրո Այրոտա, Էլենայի համալսարանական ընկերը և փեսացուն, որին վիճակված է գիտական փայլուն կարիերա:

Ուսուցիչներ

Ֆերարո, ուսուցիչ և գրադարանավար: Լիլային և Էլենային պատվոգրերով է պարգևատրել որպես ջանասեր ընթերցողների:
Օլիվիերո, ուսուցչուհի: Առաջինն է նկատել Լիլայի և Էլենայի ձիրքը: Լիլան 10 տարեկանում գրում է *Երկնագույն փերին* վերնագրով մի փոքրիկ պատմվածք, որը շատ է դուր գալիս Էլենային, որն էլ այն Օլիվիերոյին տալիս է կարդալու: Բայց ուսուցչուհին զայրանում է նրա ծնողների՝ Լիլային միջնակարգ դպրոց չուղարկելու որոշումից և դրական կարծիք չի հայտնում այդ պատմվածքի մասին: Հակառակը, դադարում է հոգ տանել Լիլայի մասին և ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում է միայն Էլենայի ուսման վրա: Մահանում է երկարատև հիվանդությունից, երբ Էլենան ավարտում է համալսարանը:
Ջերաչե, գիմնազիայի դասախոս
Գալիանի՝ լիցեյի դասախոս: Բազմակողմանի զարգացած մանկավարժ է, կոմունիստ: Էլենային առանձնացնում է մյուս ուսանողներից, գրքեր է տրամադրում կարդալու համար և պաշտպանում է կրոնի դասախոսի հետ բախման ժամանակ: Նրան իր տուն է հրավիրում՝ զավակների կազմակերպած երեկույթին: Նրանց հարաբերությունները վատանում են, երբ Լիլայի հանդեպ կրքով տարված Նինոն թողնում է դասախոսի դստերը՝ Նադյային:

Այլ անձինք

Ջինո, դեղագործի որդին: Էլենայի առաջին նշանածն է:
Նելլա Ինկարդո, ուսուցչուհի Օլիվիերոյի զարմուհին: Բնակվում է Բարանո դ'Իսկիայում: Ամռանն իր տան որոշ սենյակներ վարձով տրա-

մադրում է Սարատորե ընտանիքին: Ծովափնյա արձակուրդի ժամանակ հյուրընկալել է նաև Էլենային:
Արմանդո, բժշկական համալսարանի ուսանող, դասախոս Գալիանիի որդին
Նադյա, ուսանողուհի, դասախոս Գալիանիի դուստրը և Նինոյի նշանածը: Սիրահարվելով Լիլային՝ Նինոն նամակ է գրում Նադյային և հայտնում է իրենց հարաբերությունները խզելու մասին:
Բրունո Սոկավո, Նինո Սարատորեի ընկերը և հարուստ արդյունաբերողի որդին Սան Ջովաննի ա Տեդուչոյից: Լիլային աշխատանք է տրամադրում իրենց ընտանիքին պատկանող երշիկի գործարանում:
Ֆրանկո Մարի, ուսանող, Էլենայի նշանածը համալսարանի առաջին տարիներին

Bookmark

ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔ

Bookmark